Բարելաւեց պետական պաշտօնէութեան ու բանակի նիւթական դրութիւնը, կազմակերպեցին կօօպերատիւներ, դրաշարաններ, ակումբներ, առաւելապէս երկաթուղային բանւորութեան համար. հոգացուցին նաև ծայրագաւառների սուր կարիքները, որոնց օգնութիւն հասցրինք թէ դրամով և թէ մթերքով:

Վերջին խլրտումները ցոյց տուին, որ պետական պաշտօնէութեան մէջ թոյլ է պետական հասկացողութիւնը, և նոյնիսկ շատ շատերը միանգամայն դուրկ են դրանից: Դրա պատճառներից մէկն այն է, որ պաշտօնէութեան մէջ տեղ են բռնել օտարազգի անձինք: Այդ երևոյթը վերացնելու համար, միջոցներ ձեռք առնուեցին արագացնելու պետական հիմնարկութիւնների հայացումն ու ազգայնացումը:

Սպեկուլացիան, որ տնտեսական տագնապը ծնող պատճառներից մէկն է, հարկ եղած ուշադրութեան առնուեց և նրա դէմ կռուելու համար միջոցներ մշակուեցին:

Ընդհանուր դժգոհութեան պատճառներից մէկը կարելի է համարել նաև հողազրկութիւնը: Թէպէտ մենք ունէինք հողային կոմիտէներ, բայց նրանց գործունէութիւնը որևէ արդիւնք չէ տուել. կառավարութիւնն ընդունեց նոր օրէնք՝ հողային խնդիրները շտապով կարգաւորելու համար:

Բանակի կարիքները հոգալու և դժգոհութեանց առիթները վերացնելու համար ձեռնարկուեցին և գործադրուեցին համապատասխան միջոցներ:

Ընդհանուր ֆինանսական կացութիւնը փրկելու համար հաստատեցինք 20 միլիոն դոլարի արտաքին և ներքին փոխառութեան օրէնքը՝ յանուն Հայաստանի անկախութեան:

Հայաստանում ծագած խռովութիւնները բացասական հետևանք պիտի ունենային և, մասամբ, ունեցան Հայկական հարցի նկատմամբ՝ արտաքին աշխարհում: Ճիշտ այն օրը, երբ պիտի յանձնուէր Տաճկաստանին հաշտութեան պայմանագիրը, ծայր առան հակապետական շարժումները մեր երկրի ներսում, իսկ դրանից առաջ, դեռ մայիս 6-ին, Պոլսից Փարիզ խփած հեռագրով յայտնել են, թէ Հայաստանն արդէն ընդունել է խորհրդային իշխանութիւն ու բաժանւում է Ռուսաստանի և Տաճկաստանի միջև: Այս միտումաւոր լուրերի իսկական նպատակը պարզ է. մեր հակառակորդները ցանկացել են դրանով վերացնել պայմանագրի դոնէ Հայաստանին վերաբերող մասը: Միջոցներ ձեռք առնուեցին, ի հարկէ, հերքելու ստայօդ լուրերը, որի համար և արտասահման առաքուեց մեր ընկերներից մէկը:

Բացասական հետևանքներից մէկն էլ կարող էր լինել բանակի քայքայումը, որ միանգամայն ձեռնտու էր մեզ օղակած թշնամիներին, սակայն, ուրախ եմ յայտնելու, որ ոչ միայն տեղի չունեցաւ այդ, այլ՝ առաջանից աւելի դգաստ, աւելի արթուն՝ զօրքը պատրաստ է դիմադրելու թէ ներքին խռովութիւնները և թէ արտաքին յարձակումները (երկարատև ծափեր): Մոլորուածները գղջացին ու միացան հաւատարիմ զօրքին:

Ինչ վերաբերում է արտաքին աշխարհին, պէտք է յայտնեմ, որ մայիս 11-ին ներկայացրած հաշտութեան պայմանագրի համաձայն Տաճկաստանը պարտաւոր է ճանաչել Հայաստանի անկախութիւնը և ընդունել այն սահմանները, որ կը գծէ Վիլսընը: Թէպէտ պաշտօնապէս մեզ ոչինչ յայտնի չէ, բայց լրագրական տեղեկութիւններն ասում են, որ ամերիկեան սենատը հաւանութիւն չէ տուել Վիլսընի միջամտութեան:

Մէկ ամսւայ ընթացքում ոչ մի փոփոխութեան չեն ենթարկուել մեր յարաբերութիւնները Ադրբէջանի հետ: Ինչպէս գիտէք, մենք տուինք համա-